



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՄԻՆԱՍՅԱՆԸ ԵՎ ՍԵՄԵՐՁՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 27651/05)

ՎՃԻՌ

(արդարացի փոխհատուցում)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

7 հունիսի 2011թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

07/09/2011

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ժոզեփ Բասադեւալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Կորնելիու Բիրսան [Corneliu Bîrsan],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էխսերտ Մայեր [Egbert Myjer],

Ինետա Զիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Միհայ Պուալեւլունջ [Mihai Poalelungi]՝ *դատավորներ,*

եւ Սանտյագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Քարտուղար,*

2011 թվականի մայիսի 17-ին անցկացնելով դոնփակ խորհրդակցություն,
կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է Սարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին՝ կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության երկու քաղաքացիներ
տկն Նելլի Մինասյանի (առաջին դիմումատու) եւ տկն Ելենա Սեմերջյանի
(երկրորդ դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝
2005 թվականի հուլիսի 1-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 27651/05)
հիման վրա:

2. 2009 թվականի հունիսի 23-ին կայացրած վճռում (հիմնական վճիռ)
Դատարանը գտել է, որ երկու դիմումատուներին սեփականությունից զրկելը
չի համապատասխանել օրինականության սկզբունքին, հետեւաբար տեղի է

ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս հիմնական վճռի 69-77-րդ պարբերությունները):

3. Առաջին դիմումատուն՝ որպես բնակարանի սեփականատեր, Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն, պահանջել է Դատարանի վճռի կայացման օրվա դրությամբ բնակարանի արժեքին եւ բաց թողնված օգուտին համարժեք փոխհատուցում՝ [համապատասխանաբար] 133 467 եվրո եւ 16 683 եվրո գումարի չափով: Երկրորդ դիմումատուն, ով օգտվում էր բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունքից, պահանջել է 6 930 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում: Նրանք նաեւ պահանջել են 25 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, ինչպես նաեւ [պահանջել են հատուցում] ծախսերի եւ ծախքերի համար:

4. Քանի որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէր դրա վերաբերյալ որոշում կայացնելու համար, Դատարանը հետաձգել է այն եւ Կառավարությանն ու դիմումատուներին առաջարկել է վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում այդ հարցի վերաբերյալ ներկայացնել իրենց գրավոր դիտարկումները եւ մասնավորապես Դատարանին ծանուցել իրենց կողմից ձեռք բերված ցանկացած համաձայնության մասին (տե՛ս հիմնական վճռի 91-րդ պարբերությունը եւ եզրափակիչ մասի 4-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը):

5. Ե՛վ դիմումատուները, ե՛ւ Կառավարությունը ներկայացրել են դիտարկումներ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

6. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

1. Նյութական վնաս

ա) Դիմումատուների փաստարկները

7. Առաջին դիմումատուն պահպանել է 133 467 եվրոյի իր պահանջը: Նա պնդել է, որ փոխհատուցման գնահատումը պետք է հիմնված լիներ Դատարանի կողմից Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում հայտնաբերելու պահի՝ 2009 թվականի հունիսի 23-ի դրությամբ իր բնակարանի արժեքի վրա, եւ հայտնել, որ այդ ժամանակահատվածում տվյալ տարածքի շենքերի 1 քառակուսի մետրի շուկայական արժեքը տատանվում էր 4 000 ԱՄՆ դոլարից մինչեւ 7 000 ԱՄՆ դոլարի միջեւ (տվյալ ժամանակահատվածում մոտ 2 880 եվրո եւ 5 040 եվրո): Ի հիմնավորումն այս պահանջի՝ առաջին դիմումատուն վկայակոչել է հետեւյալ փաստաթղթերը՝

ա) մասնավոր անշարժ գույքի գործակալության 2007 թվականի նոյեմբերի 19-ի գրությունը, համաձայն որի տվյալ տարածքի նորակառույց շենքերում ստորին հարկի՝ այսպես կոչված առեստրային տարածքի 1 քառակուսի մետրի արժեքը կազմում էր 7 000-10 000 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 4 770 եվրո եւ 6 820 եվրո), իսկ առաջին եւ բարձր հարկերի՝ այսպես կոչված գրասենյակային տարածքներինը՝ 3 000-5 000 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 2 045 եվրո եւ 3 410 եվրո).

բ) մեկ այլ մասնավոր անշարժ գույքի գործակալության կողմից 2008 թվականի օգոստոսի 28-ին տրամադրված գնահատման զեկույցը, որը վերաբերում էր հարակից փողոցում գտնվող 159.8 քառակուսի մետր մակերեսով ներքնահարկ ունեցող ստորին հարկում գտնվող 185.2 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գնահատմանը, համաձայն որի 2008 թվականի փետրվարի 28-ի դրությամբ ստորին հարկի մակերեսի 1 քառակուսի մետրի արժեքը կազմում էր 1 830 375 ՀՀ դրամ (տվյալ ժամանակահատվածում մոտ 3 960 եվրո): Այդ զեկույցի համաձայն՝ հիմք ընդունելով թերթերի գովազդները եւ գործակալության սեփական տվյալների բազան՝ մոտակա փողոցների նմանատիպ անշարժ գույքի 1 քառակուսի մետրի արժեքը կազմում էր 2 000 000-2 500 000 ՀՀ դրամ (տվյալ ժամանակահատվածում մոտ 4 325 եվրո եւ 5 405 եվրո):

գ) մոտակա փողոցում գտնվող 26.8 քառակուսի մետր մակերեսով բնակարանի վերաբերյալ 2007 թվականի հունիսի 8-ին երրորդ կողմ հանդիսացող երկու անձանց միջեւ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, որի համաձայն տվյալ անշարժ գույքի 1 քառակուսի մետրի արժեքը կազմել է 1 634 890 ՀՀ դրամ (տվյալ ժամանակահատվածում մոտ 3 500 եվրո), ինչպես նաեւ

դ) մեկ այլ մասնավոր անշարժ գույքի գործակալության 2010 թվականի ապրիլի 20-ի գրությունը, համաձայն որի տվյալ տարածքի նորակառույց շենքերում ստորին հարկի 1 քառակուսի մետրի արժեքը տատանվում էր 710 000 ՀՀ դրամից մինչեւ 2 200 000 ՀՀ դրամի միջեւ (տվյալ ժամանակահատվածում մոտ 1 340 եվրո եւ 4 145 եվրո):

8. Առաջին դիմումատուն պնդել է, որ քանի որ իր բնակարանը գտնվում էր ստորին հարկում, հեշտությամբ կարող էր վերափոխվել գրասենյակային տարածքի եւ ընդլայնվել ներքնահարկի հաշվին, որն էականորեն կբարձրացներ դրա շուկայական արժեքը: Նա նաեւ պնդել է, որ հնարավորություն չի ունեցել ներկայացնելու օտարման պահի դրությամբ իր գույքի շուկայական արժեքի որեւէ գնահատում, քանի որ գնահատող կազմակերպությունները հրաժարվել են գնահատել քանդված եւ այլեւս գոյություն չունեցող գույքը:

9. Առաջին դիմումատուն պահանջել է նաև 26 683 եվրո՝ բաց թողնված օգուտի համար՝ պնդելով, որ եթե բնակարանն օտարված չլիներ, նա կարող էր 2005 թվականի մայիսից այն հանձնել վարձակալության այդ գումարով:

10. Երկրորդ դիմումատուն պահանջել է 13 000 եվրո: Գումարի այս չափը հաշվարկվել է Քաղաքացիական օրենսգրքի՝ փոփոխված 225-րդ հոդվածով սահմանված բանաձևով, որով սույն գործի հանգամանքներից հետո սահմանվեց օգտագործման իրավունքի դադարեցման դեպքում փոխհատուցման չափի հաշվարկման նոր մեթոդ (տե՛ս հիմնական վճռի 40-րդ պարբերությունը):

բ) Կառավարության փաստարկները

11. Կառավարությունը, հիմնվելով ներպետական դատարանների կողմից տրամադրված փոխհատուցման չափը հաշվարկելու համար հիմք հանդիսացած գնահատման զեկույցի վրա (տե՛ս հիմնական վճռի 13-րդ պարբերությունը), պնդել է, որ 2004 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ, այսինքն՝ այն ժամանակ, երբ դիմումատուներին առաջարկ է արվել, օտարման ենթակա բնակարանի 1 քառակուսի մետրի շուկայական արժեքը կազմել է 269.2 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 200 եվրո): Հիմք ընդունելով այդ գնահատումը՝ առաջին դիմումատուին որպես փոխհատուցում առաջարկվել է ընդհանուր 7 000 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 5 265 եվրո)՝ գումարած 6 720 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 5 055 եվրո)՝ որպես ֆինանսական խրախուսում, եթե նա համաձայներ լքել բնակարանը հաջորդող մի քանի օրվա ընթացքում:

12. Կառավարությունը նաև պնդել է, որ 2010 թվականի ապրիլի 21-ի դրությամբ օտարված բնակարանի չափերի, գտնվելու վայրի եւ որակի այլ բնակարանների 1 քառակուսի մետրի միջին շուկայական արժեքը կազմել է 320 000 ՀՀ դրամ կամ 820 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 600 եվրո): Ի հավաստումն այս պնդման՝ Կառավարությունը հիմք է ընդունել ենթադրաբար մասնավոր անշարժ գույքի գործակալության կողմից 2010 թվականի ապրիլի 21-ին ներկայացված գրությունը, որում վերոնշյալ արժեքները

մատնանշվել էին որպես Բուզանդ փողոցի 26 քառակուսի մետր մակերեսով բնակարանի 1 քառակուսի մետրի հավանական զին:

13. Կառավարությունը, հղում կատարելով վերոնշյալ գնահատման զեկույցին, տրամադրել է նաեւ օտարված բնակարանի նկարագրությունը, համաձայն որի բնակարանը գտնվել է 1905 թվականին կառուցված բնակելի շենքում: Այն ունեցել է զուգարան, բայց չի ունեցել լոգասենյակ: Հարկերը բաժանող միջնորմերը պատրաստված են եղել փայտից եւ լցված են եղել հողով: Շենքը պաշտոնապես ներառված է եղել երրորդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի ցանկում, ինչը նշանակում է, որ դրա հետագա շահագործումը հնարավոր դարձնելու համար պահանջվում էր հիմնարար վերանորոգում:

14. Կառավարությունը նաեւ նշել է, որ 2004 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ երկու անձանց միջեւ բաշխված օտարված բնակարանի օգտագործման իրավունքի շուկայական արժեքը 1 քառակուսի մետրի համար կազմել է 1.5 ԱՄՆ դոլար, մինչդեռ 2010 թվականի ապրիլին այն կազմել է 60 000 ՀՀ դրամ (տվյալ ժամանակահատվածում մոտ 115 եվրո):

15. Վերջում Կառավարությունը նշել է, որ դիմումատուներին առաջարկ ներկայացնելու պահից մինչեւ 2010 թվականի ապրիլին ընկած ժամանակահատվածում, կախված գույքի գտնվելու վայրից, չափերից եւ որակից, անշարժ գույքի գներն աճել են երեքից վեց եւ ավելի անգամ: Կոնկրետ այս դեպքում գնաճը կազմել է մոտ 300 տոկոս՝ 269.2 ԱՄՆ դոլարից [հասնելով] մինչեւ 820 ԱՄՆ դոլար[ի]:

գ) Դատարանի գնահատականը

16. Դատարանը մի շարք գործերով վճռել է, որ խախտման փաստն արձանագրող վճռով պատասխանող Պետության վրա դրվում է խախտումը դադարեցնելու եւ հնարավորության սահմաններում մինչեւ խախտումը եղած իրավիճակը վերականգնելու միջոցով հետեւանքները վերացնելու իրավական պարտավորություն (տե՛ս Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Iatridis v. Greece* (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, § 32,

ՄԻԵԴ 2000-XI): Գործի կողմեր հանդիսացող Պայմանավորվող պետություններն ըստ էության ազատ են Դատարանի կողմից խախտումն արձանագրած վճռի կատարման միջոցի ընտրության հարցում: Վճռի կատարման միջոցի ընտրության ազատությունն արտացոլում է Պայմանավորվող պետությունների՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների եւ ազատությունների ապահովման հիմնական պարտավորությանն ամրակայված ընտրության ազատության սկզբունքը (հոդված 1): Այն դեպքում, երբ խախտման բնույթը *restitutio in integrum*-ի (մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման) հնարավորություն է տալիս, դրա իրականացման ապահովման պարտականությունը կրում է պատասխանատվություն կրող Պետությունը, քանի որ Դատարանն այն իրականացնելու համար չունի ոչ լիազորություն, եւ ոչ էլ գործնական հնարավորություններ: Այնուամենայնիվ, եթե ներպետական օրենսդրությունը չի նախատեսում կամ նախատեսում է միայն խախտման հետեւանքների մասնակի վերականգնման հնարավորություն, 41-րդ հոդվածը Դատարանին իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում տուժած կողմին տրամադրել համարժեք փոխհատուցում (տե՛ս *Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [*Brumărescu v. Romania* (just satisfaction) [GC]], թիվ 28342/95, § 20, ՄԻԵԴ 2001-I):

17. Սույն գործում առաջին դիմումատուի կապակցությամբ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում է հայտնաբերվել այն հիմքով, որ օտարման ողջ, ներառյալ՝ փոխհատուցման չափի որոշման գործընթացը եղել է օրենքին հակասող (տե՛ս հիմնական վճռի 69-72-րդ պարբերությունները): Դատարանը նշում է, որ հնարավոր չէ իրականացնել *restitution in integrum*՝ բնակարանի քանդված լինելու պատճառով: Ավելին, առաջին դիմումատուի վնասը հնարավոր չի եղել փոխհատուցել նմանատիպ բնակարան տրամադրելու միջոցով: Հետեւաբար Դատարանը գտնում է, որ դիմումատուին պետք է տրամադրել նյութական վնասի փոխհատուցում:

18. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ սա այն եզակի դեպքերից է, երբ սեփականության իրավունքից ապօրինի կերպով զրկելու ժամանակ,

ի տարբերություն սեփականության իրավունքից ապօրինի կերպով զրկելու այլ դեպքերի, առաջին դիմումատուին 2004 թվականի դեկտեմբերին նրա բնակարանը վերցնելու համար որպես փոխհատուցում գումար է առաջարկվել: Այդ գումարը կազմել է տվյալ ժամանակահատվածում բնակարանի ենթադրյալ շուկայական գինը՝ 7 000 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 5 265 եվրո) եւ 6 720 ԱՄՆ դոլար (տվյալ ժամանակահատվածում մոտ 5 055 եվրո)՝ որպես ֆինանսական խրախուսում, որը կվճարվեր, եթե առաջին դիմումատուն համաձայնվեր հանձնել իր գույքն առաջարկին հաջորդող հինգ օրերի ընթացքում: Դիմումատուն, ով մերժել էր առաջարկը, ի վերջո 2005 թվականի մայիսին ստացավ 7 000 ԱՄՆ դոլարի փոխհատուցում:

19. Դատարանն իր տրամադրության տակ չունի բավարար նյութեր, որոնք իրեն հնարավորություն կտային եզրակացնելու, որ առաջին դիմումատուին հատկացրած գումարը եղել է համարժեք եւ արտացոլել է նրա բնակարանի շուկայական արժեքը: Ըստ առաջին դիմումատուի պնդման՝ դա այդպես չի եղել: Հաշվի առնելով, որ այդ գումարի չափը որոշվել է մի գործընթացի արդյունքում, որը ճանաչվել է օրենքին հակասող՝ Դատարանը չի կարող բացառել այն հնարավորությունը, որ այն կարող է հանգեցրած լինել ոչ համարժեք փոխհատուցման: Ամեն դեպքում Դատարանը նշում է, որ քանի որ օտարված բնակարանն այլեւս գոյություն չունի, անհնար է ստույգ հաշվարկել նյութական վնասի չափը: Հետեւաբար ցանկացած նման վնասի գնահատումը կիրականացվի արդարության սկզբունքի հիման վրա:

20. Հաշվի առնելով իր նախադեպային իրավունքում հաստատված համապատասխան սկզբունքները՝ Դատարանը համարում է, որ գործի առանձնահատուկ հանգամանքների պայմաններում առավել համարժեք է արդարացի լուծում է տվյալ ժամանակահատվածում բնակարանի հավանական արժեքի վճարումը՝ փոխարկված ներկայիս համարժեք գնով՝ գնաճի հետեւանքները հատուցելու համար՝ դրանից հանելով ներպետական մակարդակում արդեն վճարված գումարը: Իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի վրա հիմնվելով այդպիսի գնահատում կատարելով՝ Դատարանը նյութական վնասի փոխհատուցման չափ է նշանակում 8 000 եվրո: Դատարանը նաեւ համարում է, որ հատուցման գումարի այս չափը պետք է տրվի երկու դիմումատուներին միասին, քանի որ տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն երկրորդ դիմումատուի օգտագործման իրավունքը համարժեք է եղել առաջին դիմումատուի բնակարանում ունեցած համապատասխան մասին: Հետեւաբար Դատարանը, հիմնվելով փոփոխված 225-րդ հոդվածում ամրագրված բանաձեւի վրա, որոշում է մերժել երկրորդ դիմումատուի պահանջը:

21. Վերջում Դատարանը նշում է, որ առաջին դիմումատուն նաեւ պահանջել է այնպիսի բաց թողնված օգուտի փոխհատուցում, ինչպիսին է հնարավոր բաց թողնված վարձավճարը: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ այս հատուկ պահանջն ունի ենթադրական բնույթ եւ պետք է մերժվի:

2. Ոչ նյութական վնաս

22. Որպես ոչ նյութական վնասի հատուցում առաջին դիմումատուն պահանջել է 40 000 եվրո, իսկ երկրորդ դիմումատուն՝ 20 000 եվրո:

23. Կառավարությունն այս պահանջների առնչությամբ մեկնաբանություններ չի ներկայացրել:

24. Դատարանը համարում է, որ գույքից ապօրինաբար զրկվելու արդյունքում առաջացած անօգնականության եւ անհանգստության զգացումները դիմումատուներին պատճառել են ոչ նյութական վնաս, որը պետք է համարժեք կերպով փոխհատուցվի: Առաջնորդվելով Կոնվենցիայի 41-րդ հոդվածով ամրագրված արդարության սկզբունքով՝ Դատարանը որոշում է այս մասով դիմումատուներից յուրաքանչյուրին տրամադրել 2 000 եվրո կամ ընդհանուր՝ 4 000 եվրո:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

25. Դիմումատուները պահանջել են 2 800 եվրո՝ որպես ծախսերի եւ ծախքերի հատուցում, որից 2 500 եվրո՝ փաստաբանական ծառայության վճարի եւ 300 եվրո՝ փոստային վճարների համար: Ի հիմնավորումն այս պահանջի՝ նրանք ներկայացրել են իրենց իրավաբանի հետ կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը եւ մանրամասն ժամանակացույցը:

26. Կառավարությունն այս պահանջի առնչությամբ մեկնաբանություն չի ներկայացրել:

27. Դատարանը կրկին նշում է, որ դատական ծախսերը հատուցելի են միայն այնքանով, որքանով դրանք առնչվում են հայտնաբերված խախտմանը (տե՛ս *Բեյլերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Beyeler v. Italy* [GC]], թիվ 33202/96, § 27, ՄԻԵԴ 2000-I): Այն նշում է, որ սույն գործով գանգատը վերաբերել է նաեւ անընդունելի հայտարարված բողոքներին (տե՛ս հիմնական վճռի 78-82-րդ պարբերությունները): Հետեւաբար պահանջը չի կարող ամբողջությամբ բավարարվել, եւ անհրաժեշտ է կիրառել փոքր նվազեցում: Առաջնորդվելով արդարության սկզբունքով՝ Դատարանը դիմումատուներին տրամադրում է 2 500 եվրո հատուցում՝ կրած բոլոր ծախսերի եւ ծախքերի համար:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

28. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուներին միասին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն ՀՀ դրամի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

(i) նյութական վնասի դիմաց՝ 8 000 եվրո (ութ հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

(ii) ոչ նյութական վնասի դիմաց՝ 4 000 եվրո (չորս հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

(iii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 2 500 եվրո (երկու հազար հինգ հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

2. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի

մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2011 թվականի հունիսի 7-ին՝
համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտյագո Կեսադա

Ժողեփ Քասադեալ

Քարտուղար

Նախագահ